Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Մայրենի դասի պլանավորումն որպես արդյունավետության բարձրացման միջոց
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Քնար Ղարիբյան Արմենի Դասվար +37494071509 qaribyanknar957@gmail.com Մայրենի, Մաթեմատիկա, Կերպարվեստ , Տեխնոլոգիա, Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն I-IV
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության)	Նոր Հաճնի Մեծն Մուրադի անվան թիվ 4 հիմնական դպրոց +37494071509 nhachn4@gmail.com

• Web կայքի հասցե	norhachn4. schoolsite.am

Բովանդակություն

Ներածություն 3
Հիմնական բովանդակություն 5
Եզրակացություններ, առաջարկություններ
20
Օգտագործված գրականության ցանկ 22
Հավելվածներ 23

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Ինչպե՞ս է մայրենիի դասի պլանավորումը նպաստում դասի յուրացման վրա:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Նպատակի ուսումնասիրությունը ուղղված է հետևյալ կոմպետենցիաներին. ● լեզվական գրագիտություն և կարողունակություն, ● սովորել սովորելու կարողունակություն, ● ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Նոր Հաճնի Մեծն Մուրադի անվան թիվ 4 հիմնական դպրոց 4-րդ Բ դասարան 24 աշակերտ 13 տղա և 11 աղջիկ
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Հետազոտությունը իրականացնելիս կիրառել եմ տարբեր մեթոդներ և գործիքներ , այդ թվում ՝ համագործակցային,խառաբաժան , մտագրոհ, T- աձև աղյուսակ:Հետազատությունը անցկացրել եմ զրույցի. ամփոփիչ թեստի, խմբային աշխատանքի միջոցով: Մտագրոհ մեթոդը կիրառելիս սովորողները հնարավորություն ունեցան անկաշկանդ արտահայտելու սեփական մտքերը: Խմբային աշխատանքում ինտեգրված էին բացառապես բոլոր սովորողները: Աշխատանքները փորձեցի կազմակերպել այնպես, որ խմբի յուրաքանչյուր անդամ իր ներդրումն ունենա ընդհանուր աշխատանքում (խմբում առկա էր աշխատանքի բաժանում՝ խմբի անդամներից մեկը նկարում էր , մեկը՝ գունավորում էր, երկուսը՝ պաստառի նախանշված հատվածում բութագրող

	բառեր էին գրում , իսկ մյուս երկուսը ներկայացնում էին իրենց կատարած աշխատանքը):
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	01.09 22.09 2023թ.

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	Շատ կարևոր է, որ ռազմավարության, մեթոդների ընտրությունը բխի դասի նպատակներից և նպատակների ձևակերպած խնդիրների առկայությունից: Երբ խնդիրները հստակ ձևակերպված չեն լինում, գլխավորն ու երկրորդականը չեն տարբերակվում, նոր նյութը հին նյութի հետ փոխկապակցված չի լինում, ընտրված մեթոդներն ու առաջադրանքները ընտրելիս հաշվի չեն առնվում բարդության աստիճանը, առավել ևս, երբ նպատակները չափազանցված են լինում, և հնարավոր չի լինում հասնել դասի արդյունավետության ու վերջնարդյունքների կատարման, դասը կայացած համարել չի կարելի: Ցուրաքանչյուր դասի պատրաստվելիս ուսուցիչն իր համար պետք է հստակեցնի անելիքները՝ տալով նմանատիպ հարցեր. ա) Արդյո՞ք իմ նպատակները չափելի են, հասկանալի ու կոնկրետ: բ) Համապատասխանու՞մ են իմ որոշած նպատակները դասարանի առանձնահատկություններին: գ) Որքանո՞վ են իմ ակնկալիքները իրատեսական և արդյունք ապահովող: դ) Որքանո՞վ են նախապատրաստված աշակերտները նոր նյութի ընկալմանը: ե) Արդյո՞ք նպատակների իրականացումը կբերի ակնկալվող վերջնարդյունքների: Մեր հետազոտական աշխատանքի նպատակը ուսումնառության գործընթացի արդյունավետության բարձրացման համար դասի պլանավորման դերի և

հշանակության դիտարկումն է: Ուսումնասիրելով մանկավարժության պատմությունը, ծանոթանալով հայ և օտար ազգերի մանկավարժների հայացքներին, առաջադրած սկզբունքներին, մեթոդաբանությանը՝ առանձնացրել եմ մի քանիսին, ովքեր ուսումնառության մեջ կարևորություն են տվել դասի պլանավորմանը:

Դեռևս V-VI դարերում հայ խոշոր փիլիսոփա, մանկավարժ Դավիթ Անհաղթը յուրովի էր դասավորում ուսուցման ընթացքը. «Ուսուցումը սկսել նյութի իմացումով, նպատակի գիտակցումով, իմանալ նյութի բնությունը (բովանդակությունը), սահմանումը (ի՞նչ է...) և անցնել նկարագրության (ինչպիսի՞ն է...)»[1]: Ըստ նրա՝ պետք է նախապես բացատրել ուսումնասիրման նպատակը, կռահել սպասվելիք արդյունքը, ճշգրիտ իմանալ երկի անվանման պատճառը, ճշտել գլուխների բաժանումն ըստ բովանդակության, պարզել հարցերի քննարկման հերթականությունը, ղեկավարել որոշակի եղանակ-մեթոդներով, ճշտել՝ գիտելիքների որ մասին է վերաբերում անցնելիք նյութը, որպես ավարտ՝ գործնական կիրառում:Նա բարձր է դասում ուսուցչի դերը, նրա կենդանի խոսքը, ակտիվ միջամտությունը, նրա բարոյականային կերպարը:

XIII դարի Գլաձոր համալսարանի ուսուցչապետ Սասունի Նիչ գյուղից Եսայի ճշեցին (1250/54-1338թթ) մատնանշում է, որ ուսուցիչը պետք է հանդես գա որպես նյութը մշակող, վերլուծող, պարզաբանող, խոսքը պատկերավոր, գրավիչ, հագեցված լինի, կյանքից վերցրած օրինակներով, նյութը մատուցի պարզ, հասկանալի, մատչելի: Դասն անցկացնի

համակարգված սկզբունքներով:

XIX դարի հայ հրապարակախոս, հրատարակիչ-խմբագիր, գրող-գրականագետ, թարգմանիչ, ականավոր, մանկավարժ Մատթեոս Մամուրյանը՝ Զմյուռնիայից (1930-1901թթ), դասին ներկայացնում է որոշակի պահանջներ.

Ցոլակ Սիմոնյան «Հայ մանկավարժության պատմություն» 2012թ Երևան, «Վան Արյան», բաժին Բ, Դավիթ Անհաղթ, էջ 25-26

ա) Որոշակի բովանդակության հատուկ նպատակադրում, հաղորդել գիտելիքներ, մշակել հմտություններ,

բ) Բազմապիսի, բազմաբնույթ մեթոդների կիրառում,

գ) Ապահովել դիդակտիկայի պահանջներն ու պայմանները,

դ) Ձևավորել բարոյական կերպար,

ե)Դասը լինի դաստիարակչական:

Հայկական մանկավարժական մտքին համադրել եմ նաև XIX դարի գերմանացի մանկավարժ, փիլիսոփա, գրող, հասարակական և քաղաքական գործիչ, գերմանացի ուսուցիչների ուսուցիչ Ֆրիդրիխ Ադոլֆ Վիլհելմ Դիստերվերգի տեսակետները:Նա ուսուցման մեջ մեծ նշանակություն էր տալիս լավ դասագրքին և հստակ մշակված պլանին՝ փաստելով, որ լավ ուսուցիչը պետք է կատարելապես տիրապետի իր առարկային, սիրի իր մասնագիտությունն ու երեխաներին և մշտապես զինվի գործնական մանկավարժության ունակություններով ու հմտություններով:

Ի մի բերելով նշանավոր մարդկանց սկզբունքներն ու տեսակետները՝ կարելի է հստակ ասել, որ բոլոր ժամանակներում էլ պարտադիր և անհրաժեշտ պայման է

	հանդիսացել դասի պլանավորումը: Դասերը պլանավորելիս, նպատակներն ու վերջնարդյունքները ձևակերպելիս պետք է առաջնորդվել հանրակրթության պետական չափորոշիչներից: Արդի մանկավարժությունը պահանջում է դասը պլանավորելիս հստակ ձևակերպել նպատակները, դրանց հասնելու ուղիները, կատարման պարզությունը և վերջնարդյունքները:
Հետազոտության ընթացքը	Հետազոտական աշխատանքը անցկացրել եմ ենք 4-րդ դասարանում՝ մայրենիի դասաժամին: Ժողովրդական բանահյուսության ուսումնասիրությունն արդեն բարդ ու աշխատատար գործընթաց է՝ լի բազմաթիվ դժվարություններով՝ և՛ բնագրի ճիշտ ընթերցում, և՛ բառարանային աշխատանք, և՛ արտասանական, ուղղագրական, բերականական ու բառապաշարային տարբերություններ: Ճիշտ պլանավորված դասը, համապատասխան նպատակներն ու սահմանված վերջնարդյունքները, արդյունավետ մեթոդներն ու առաջադրանքները կօգնեն և՛ ուսուցչին, և՛ աշակերտներին՝ ընկալելու, յուրացնելու թեման ամբողջությամբ: Դասերն առավել արդյունավետ դարձնելու համար պետք է կիրառենք ուսուցման նոր մեթոդներ, հետաքրքիր առաջադրանքներ, պաստառներ, նկարներ՝ թեմային համապատասխան, վերջում՝ ամփոփիչ թեստ: Ուսուցման մեթոդները ընտրելիս պետք է հաշվի առնենք նրանց նպատակահարմարությունը տվյալ պահին, որոնց միջոցով կապ է ստեղծվում ուսուցման պլանավորած նպատակի և վերջնարդյունքի միջև:

Մեթոդների ընտրությունը պետք է ճանապարհ հարթի հետևյալ հարցադրումներով՝ ի՞նչ սովորեցնել, ինչու՞ սովորեցնել և ինչպե՞ս սովորեցնել:
Կբնութագրեն հերոսներին՝ խմբավորման և մտագրոհի մեթոդներով:
Պատկերավորման միջոցները՝ համեմատությունները, փոխաբերությունները և անձնավորումները ամփոփման դասին կներկայացնենք քառաբաժան մեթոդով:
Ընտրված հերոսներին ներկայացնել T-աձև աղյուսակով:
Կկիրառվեն նաև այլ մեթոդներ՝ միմյանց և խմբերին հարցադրումներ տալու համար:
13 դասաժամի համար կընտրենք դասի տարբեր տիպեր՝
1.Նոր ուսումնական նյութի յուրացման դաս,
2.Համակցված դաս
3. Գիտելիքների ու կարողությունների ստուգման և ստուգման դաս (ընթացիկ դաս)
4. Կարողությունների ու հմտությունների ձևավորման և ամրապնդման դաս (ամփոփիչ դաս):
Աշխատանքը կանցկացնենք անհատական, զույգերով և համագործակցային խմբերով:Համագործակցային խմբերը կկազմենք տարբերակված և խառը:
Դասարանում սովորում են 24 աշակերտներ, հետևաբար՝ 4 խումբ՝ 6 անդամներով: Առաջին բաժանման ժամանակ մեկ առաջադրանք կհանձնարարեմ՝ ըստ աշակերտների առաջադիմության տարբերակման խմբերի, այսինքն՝ «4»-«5» գնահատական ստացողները՝ մեկ խմբում, միայն «9» ստացողները՝ մեկ խմբում, «6»-«7»-«8» ստացողները՝ երկուական խմբերում: Նպատակը բոլորի մոտ ակտիվությունը, սեփական անձի կարևորությունը, շահագրգռվածությունը խթանելն է:
Հաջորդ դասերին կփոխենք խմբերը՝ վստահ լինելով, որ աշակերտներն արդեն հետաքրքրություն են ձեռք բերել և իրենց կարևոր են զգում խմբային աշխատանքում:
Բոլոր խմբերը կունենան պատասխանատուներ, ովքեր կկարգավորեն ներխմբային աշխատանքները: Պետք է հասնել նրան, որ խմբի բոլոր անդամները գիտակցեն

միասին աշխատելու ոգին, և ընդհանուր նպատակին հասնելու համար իրենց փոխկապակցությունն ու փոխկախվածությունը, հանդուրժողականությունը, լսելու կարողությունը հաջողության գրավական են:
Խմբային աշխատանքի գնահատումը կարելի է կազմակերպել փոխադարձ գնահատման և ինքնագնահատման միջոցով, որոնց համար կգծվեն սանդղակներ:
Ուսուցումը կազմակերպելու ենք ԽԻԿ համակարգով, որը նպաստում է աշակերտների քննադատական մտածողության, ինքնուրույն եզրահանգումներ անելու ունակության, ստեղծագործական զարգացմանը:
Խթանման փուլում կբացահայտենք նոր նյութի վերաբերյալ աշակերտների ունեցած գիտելիքները, կակտիվացնենք նրանց՝ ներգրավելով քննարկվելիք նյութի մեջ, կառաջացնենք շահագրգռվածություն և ձգտում գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու համար:
Իմաստի ընկալման փուլում կհաղորդենք նոր նյութի տեղեկատվությունը և գաղափարը, որով էլ կշաղկապենք հին նյութին: Կշոգեստման փուլում աշակերտները, արդեն յուրացրած նոր գիտելիքները, կդարձնեն սեփականը և դրանք կկիրառեն ու կարտահայտեն իրենց բառերով ու ձևակերպումներով:
Ամփոփման դասից առաջ կկազմենք ամփոփիչ գնահատման թեստեր, որպեսզի ստուգվի տվյալ նյութի յուրացման աստիճանը:
Եվ վերջապես, անդրադառնանք հետազոտական աշխատանք գրելու նպատակին և շարժառիթին:
Դասի պլանավորման համար, ինչպես արդեն նշել ենք, պետք է հստակ սահմանվեն դասի նպատակները և ակնկալվող վերջնարդյունքները:
Սկզբում դասին կտանք ակադեմիական և սոցիալական նպատակներ:
Հաջորդիվ դասի համար կձևակերպենք նյութին համապատասխան նպատակներ և վերջնարդյունքներ:
Կսահմանենք միայն նպատակները, որոնք գրելով գրատախտակին կդիմենք աշակերտներին, որպեսզի

նրանք կարողանան առաջարկել այդ նպատակներից բխող վերջնարդյունքներ:

Ամփոփիչ դասի համար, աշակերտները պետք է ուղղորդած հարցերի միջոցով առաջարկեն դասի նպատակներն ու վերջնարդյունքները:

Կիրառած մեթոդներից և պլանավորումից ակնկալում ենք, որ աշակերտները՝

1.Հստակ կընթերցեն տրված բնագրերը,

2.Կզգան սոցյալական խավերի տարբերությունները,

3.Կօգտվեն բառարաններից,

4.Կներկայացնեն բանահյուսության ոճերի առանձնահատկությունները,

5.Կհորինեն իրենց պատկերացրած հերոսների դրական և բացասական կերպարները և կբնութագրեն նրանց,

6.Կունենան դիմացինի ցավի զգացողություն,

7.Կզգան հոգեբանական վիճակներ,

8.Կհիմնավորեն բնագրերի միջոցով մեզ ուղղված ուղերձը,

9.Կարժևորեն Ժողովրդական բանահյուսության դերը հայ իրականության մեջ,

Ինչպես արդեն նշել էինք, հետազոտական աշխատանքը անցկացրեցինք 4-րդ դասարանում՝ մայրենիի դասաժամին:

Օրվա պլանը գրել էինք՝ սահմանելով նպատակներ.

1. Կծանոթանան ժողովրդական բանահյուսության փոքրածավալ ժանրերին (հանելուկ, դարձվածք, ասացվածք,

	առած, ...) 2.Կզարգացնեն արտասանական կարողությունները 3.Կզարգացնեն բառարանից օգտվելու կարողությունները 4.Կզարգացնեն հիշողության, ուշադրության, տրամաբանական մտածողության կարողությունները 5.Կզարգացնեն արտահայտիչ կարդալու կարողությունները 6.Կիմանան ոսկի, առաջին, ամբողջ,աղջիկ, աշխարհ, ամբողջ, կյանք, ավագ, երգել, թագավոր, անհման, տարօրինակ, միջնեկ, հայելի, գլխիվայր, փորձել, վարդ, ճամփա, օրորոց, արև, խնդրել, շոգ, խեղդվել, հանկարծ, հոգնել, թաքցնել, բույն, վերցնել, խաբել, արթնանալ, առավոտյան, օրհնել, հեքիաթ, տերև, վերև բառերի ուղղագրությունը 7.Գաղափար կկազմեն առարկա (անձ, իր) ցույց տվող բառերի մասին 8.Կզարգացնեն բնագիրը վերարտադրելու և դատողություններ անելու կարողությունները 9.Կզարգացնեն հանելուկների բառերը և նկարագրվող երևույթները խմբավորելու կարողությունները 10.Կհորինեն հանելուկ որևէ առարկայի մասին 11.Կսովորեն մենախոսել՝ դրսևորելով արտասանական կարողությունները 12.Կպատրաստեն փոքրիկ ելույթ՝ իրենց հետաքրքրող թեմայով 13. Կամրակայեն տեքստը դերերով արտահայտիչ կարդալու կարողությունները 14.Կհամեմատեն կից նկարը բնագրի բովանդակության հետ 15.Կզարգացնեն ստի և սուտասելուկի միջև տարբերություններ հասկանալու կարողությունները 16.Կհամեմատեն դարձվածքի իմաստը բնագրի

համապատասխան հատվածի հետ 17.Կզարգացնեն ստեղծագործական կարողությունները՝ ինքարելով հեքիաթի դուր եկած հատվածը
18.Կսովորեն վարել երկխոսություն՝ պահպանելով վարելու կանոնները (նայել խոսողի աչքերին,հարցեր տալ, կիրառել բարեկիրթ խոսքի ընդունված լեզվական միջոցները)
19.Կստեղծեն երկխոսություններ խոսքային տարբեր իրավիճակներում 20.Կկարողանան բնագրում գետեղված օրորոցային ընթերցել թեթև, սահուն
21.Կզարգացնեն ստեղծագործական կարողությունները՝ հարցերի միջոցով կանխագուշակելով տեքստի ավարտը
22.Կամրակայեն մեծատառի գրության մասին ունեցած գիտելիքները 23.Կկարողանան հորինել զվարճալի դեպք, խնդուկ
24.Կհարստացնեն բառապաշարը բառախաղերի միջոցով
25.Գաղափար կկազմեն գործողություն ցույց տվող բառերի և դրանց առաջադրվող հարցերի մասին
26.Անգիր կսովորեն առած-ասացվածքներ
27.Կմեկնաբանեն դարձվածքների ուղիղ և փոխաբերական իմաստը 28.Կծանոթանան բանավեճի կանոններին
29.Գաղափար կկազմեն օրհնանք-մաղթանքների դերի և նշանակության մասին 30.Կկարողանան արտահայտիչ ընթերցել բնագրի օրհնանքը
31.Կմեկնաբանեն օրհնանքի բովանդակությունը

Տվյալների մշակում և վերլուծություն

Հետազոտությունը, գործընկերների դիտարկումները, աշակերտների ինքնագնահատումը, խմբերի փոխադարձ գնահատումները հնարավորություն են ընձեռում վերլուծել մեր կատարած աշխատանքը:

Իմ հետազոտական աշխատանքի նպատակը ուսումնառության գործընթացի արդյունավետության բարձրացման համար դասի պլանավորման դերի և նշանակության դիտարկումն էր: Իհարկե, յուրաքանչյուր դաս պետք է ունենա իր թեմային և

	բովանդակությանը համապատասխան պլանավորում: Գործընկերներիս հետ քննարկումների դիտարկումները, յուրաքանչյուր խմբի փոխադարձ գնահատումը, թույլ առաջադիմությամբ աշակերտների ինքնագնահատումը խառը խմբային աշխատանքում, ամփոփիչ թեստային աշխատանքի և առաջադիմության ցուցանիշը կազմվել են աղյուսակներով (դիագրամներով) և սանդղակներով (ռուբրիկներով):Այդտեղ հստակ երևում են աշակերտների և խմբերի մասնակցությունները, ակտիվությունը բոլոր առաջադրանքներում: Ամփոփիչ թեստային աշխատանքի առաջադիմությունը 63% է, անբավարար ստացողներ չկան, այստեղից պարզ է դառնում, որ բոլոր աշակերտները յուրացրել են թեման: <<Թույլ առաջադիմությամբ աշակերտների ինքնագնահատումը խառը խմբային աշխատանքում>> աղյուսակում հստակ երևում է թիրախային 5 աշակերտների մասնակցությունը վերջին՝ ամփոփման դասին: «Խմբերի անդրադարձը փոխադարձ գնահատմանը» աղյուսակում յուրաքանչյուր խումբ գնահատել է մյուս խմբերին մասնակցության, կարգապահության, հարցադրումների և փոխօգնության համար: Գործընկերների վերլուծության և քննարկման սանդղակը ցույց է տալիս բոլոր աշակերտների կատարած աշխատանքները: Ընտրված մեթոդները և հնարները, սահմանած նպատակներն ու վերջնարդյունքները ճիշտ էին կազմակերպված, ուստի դասաժամերը հաջողված էին:



10»-2 աշակերտ

«9»-8 աշակերտ

«8»-2 աշակերտ

«7»-3 աշակերտ

«6»-2 աշակերտ

«5»-6 աշակերտ

«4»-1 աշակերտ

Առաջադիմությունը՝ 63%



Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Նախաբանում նշել էինք, որ յուրաքանչյուր ուսուցիչ ամեն դասի պատրաստվելիս պետք է իր համար հստակեցնի անելիքները, որոնք կօգնեն պլանավորել դասը, սահմանել նպատակները, դրանցից բխող վերջնարդյունքները, ընտրել մեթոդները, հստակեցնել դասի տիպերը: Մեր հետազոտական աշխատանքի նպատակն էր դիտարկել դասի պլանավորման դերն ու նշանակությունը ուսումնառության գործընթացում: Այդ բոլոր դասերի անցկացման և հետազոտման արդյունքում հասանք մեր առջև սահմանած նպատակներին, որոնք էին՝ աշակերտները հստակ հասկանային, թե ինչ պետք է սովորեն յուրաքանչյուր դասին, ինչպես պետք է հասնեն նպատակների իրագործմանը և ինչ միջոցներով պետք է հասնել վերջնարդյունքների կատարմանը: Նպատակ էինք դրել նաև, որ աշակերտները սիրեն մեր հարուստ ու ճոխ թևավոր խոսքերը,գործածեն դրանք առօրյայում, հարստացնեն իրենց բառապաշարը: Կարողանան գտնել բանալի բառերը, որով էլ կգտնեն ստեղծագործությունների հիմնական գաղափարները: Յուրաքանչյուր հետազոտություն անցկացնելու համար պետք է առաջադրվեն խնդիրներ, այնուհետև այդ խնդիրների լուծման համար փնտրել հնարավոր տարբերակներ և հասնել ակնկալվող վերջնարդյունքներին:

Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. Ցոլակ Սիմոնյան «Հայ մանկավարժության պատմություն» 2012թ Երևան, «Վան Արյան», բաժին Բ, «Դպրոցն ու դաստիարակությունը 5-10-րդ դարերում», Դավիթ Անհաղթ, էջ 25-26
2. Ցոլակ Սիմոնյան «Հայ մանկավարժության պատմություն» 2012թ Երևան, «Վան Արյան», բաժին Դ, «Դպրոցն ու դաստիարակությունը 12-15-րդ դարերում», Եսայի Նշեցի, էջ 50-51
3. Ցոլակ Սիմոնյան «Հայ մանկավարժության պատմություն» 2012թ Երևան, «Վան Արյան», բաժին Է, «Դպրոցն ու մանկավարժական միտքը 1860/61թթ մինչև դարավերջ», Մատթեոս Մամուրյան, էջ 162
4. <<Ինչպես պլանավորել Մայրենիի դասը>> ուսուցչի ձեռնարկ, Կարինե Թորոսյան, Կարինե Զիբուխչյան, Աստղիկ Բալայան ,էջ 1-25
5. Մայրենի 4 դասագիրք, Վաչագան Սարգսյան,Սուսաննա Գրիգորյան,Կարինե Թորոսյան , Հեղինե Խաչատրյան, էջ 1-20
6. Դպրոցական կարգապահությունը և նրա կապը ուսուցման հետ, հոդված 1844
7. Հանրակրթության պետական չափորոշիչներ

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	